ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ֆ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

(ծննդյան 80-ամյակի առթիվ)



Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ Ֆադեյ Տաճատի Սարգսյանը բոլորեց իր ծննդյան 80 տարին: Նրա կենսագրությունն իմաստավորված է աշխատանքային հարուստ և բազմակողմանի գործունեությամբ: 1946 թ. ի վեր, Լենինգրադի Ս. Մ. Բուդյոննու անվան Կապի ռազմական ակադեմիան ավարտելուց հետո և ապա մինչև 1963 թ., իբրև հաշվողական տեխնիկայի և կառավարման ավտոմատացված համակարգերի բնագավառի առաջավոր մասնագետ, Ֆ. Տ. Սարգսյանը արդյունավետ աշխատանքային գործունեություն է ծավալել ԽՍՀՄ Պաշտպանության նախարարության Հրթիռահրետանային գլխավոր վարչության գիտատեխնիկական կոմիտեում՝ անմիջական մասնակցություն ունենալով ռադիոլոկացիոն սպառազինությունների նոր տեսակների ստեղծման և արտադրության դժվարին և, միաժանակ, հույժ կարևոր գործում: Ըստ էության, մասնագիտական այս բնագավառը պետք է դառնար ապագա խոշորագույն գիտնականի և արտադրության կազմակերպչի աշխատանքային գործունեության առանցքն ու բովանդակությունը: Շարունակելով մնալ իսկական զինվորական ծառայության մեջ՝ Ֆ. Սարգսյանը 1963 թ. ԽՄԿԿ ԿԿ և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշմամբ գործուղվել է ԽՍՀՄ Ռադիոարդյունաբերության նախարարություն՝ իր մասնագիտական մասնակցությունը բերելու երկրի համար անչափ կարևոր՝ նորագույն զինատեսակների ստեղծման պատվերների կատարմանը: Այս բնագավառում իր ակնառու ներդրումների համար Ֆ. Սարգսյանը պարգևատրվել է կառավարական բարձր պարգևներով՝ Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով և մեդալներով: 1963-1977 թթ. նա ղեկավարում էր Երևանի Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը, դրան զուգահեռ, 1968-1977 թթ. աշխատելով որպես ԽՍՀՄ Պաշտպանության նախարարության զորատեսակների կառավարման ավտոմատացված համակարգերի գլխավոր կոնստրուկտոր: Գիտնականի և գիտության կազմակերպչի իր շռայլ տաղանդը Ֆ. Սարգսյանը դրսևորեց այս բնագավառներում՝ երկրի պաշտպանության համակարգը և ժողովրդական տնտեսությունը տեխնիկական արդիական միջոցների ու կառավարման նորագույն համակարգերով հագեցնելու ուղղությամբ: Մասնավորապես, Երևանի Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում նրա գլխավորությամբ իրականացվող տեսական և կիրառական բնույթի աշխատանքների առանցքը դարձան էլեկտրոնային հաշվիչ մեքենաների համալիրների հիման վրա պաշտպանական և ժողովրդատնտեսական ուղղվածության համակարգերի ստեղծումն ու զարգացումը: Ֆ. Սարգսյանը գործնական ու կիրառական աշխատանքներին էր զուգադրում գիտատեսական որոնումները: 1968 թ. նրան շնորհվեց տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 1969 թ. նա արժանացավ գեներալ-մայորի զինվորական կոչման: Այս և հաջորդ տարիներին ակնառու էր, մասնավորապես, Ֆ. Սարգսյանի

ներդրումը միկրոծրագրային սկզբունքի և ավտոմատ ծրագրավորման հիման վրա կազմակերպված «Նաիրի» էլեկտրոնային հաշվիչ մեքենաների մշակման և արտադրության գործում, որը պսակվեց 1971 թ. նրան շնորհված պետական մրցանակով:

Ֆ. Սարգսյանի գիտատեխնիկական ու գիտակազմակերպչական գործունեության հետ մի հայտնի չափով կապվում է այն իրողությունը, որ ռազմավարական խոշոր նշանակություն ունեցող պետական ծրագրերի իրականացման մեջ ընդգրկվեց նաև Հայաստանի գիտատեխնիկական միտքն ու ներուժը: Դրա շնորհիվ էր, որ մեր հանրապետության համար ապահովվեց առաջատար տեղերից մեկը երկրի զինված ուժերի և ժողովրդական տնտեսության համար կենսական նշանակություն ունեցող՝ հաշվողական տեխնիկայի միջոցների և կառավարման համակարգերի ստեղծման բնագավառում: Ֆ. Սարգսյանի գործունեությունն այս ժամանակաշրջանում բնութագրվում է և՛ ռազմավարական ուղղությունների մշակումների, և՛ դրանց իր անձնական մասնակցության չափանիշներով, որի արդյունքն էին «Հրազդան», «Նաիրի» և այլ ԷՄՀ-ների մշակումը և արտադրական թողարկումները: Դրանց վերաբերող՝ Ֆ. Սարգսյանի աշխատությունները մեծապես նպաստեցին հաշվողական տեխնիկայի և կառավարման ավտոմատացման բնագավառների զարգացմանը մեր հանրապետությունում և նրա սահմաններից դուրս: Աշխատանքային ու գիտական խոշոր նվաճումների համար 1975 թ. Ֆ. Սարգսյանին շնորհվեց տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, 1971 թ. նա ընտրվեց ՀՀ Գիտությունների Ակադեմիայի թղթակից անդամ, որին հետևեց 1977 թ. ՀՀ ԳԱ ակադեմիկոսի կոչումը:

1977-1989 թթ. վարելով Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի պաշտոնը, Ֆ. Սարգսյանը հանդես է եկել իբրև պետական խոշոր գործիչ: Նրա ղեկավարությամբ հանրապետության աշխատավորությունը և գիտատեխնիկական մտավորականությունը հաջողությամբ իրականացրեցին տնտեսության վերելքի համար անհրաժեշտ այնպիսի նորագույն արտադրական ոլորտների զարգացումը, ինչպիսիք են ճշգրիտ մեքենաշինության, սարքաշինության, ռադիոէլեկտրոնիկայի ճյուղերը: 1993 թ. ցայսօր Ֆ. Սարգսյանը հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտն է: Այստեղ նույնպես ի հայտ եկան, և շատ ավելի մեծ չափերով, գիտության կազմակերպչի նրա շնորհները, մասնավորապես, ակադեմիայի, որպես հանրապետության գիտական խոշորագույն օջախի պահպանության, գիտական ներուժի կայունացման, այն գործնական զարգացման հունով առաջ մղելու ասպարեզներում: Ընդհանուր և հանրապետության համար կարևոր այս գործունեության հետ միասին պետք է առանձնացնել Ֆ. Սարգսյանի հետազոտությունների հրատապ նշանակությունը երկրի պաշտպանության և ինֆորմատիկայի ուղղությունների բնագավառում, որի գործնական արդյունքներից է ակադեմիական գիտահետազոտական համակարգչային ցանցը՝ իր լրատվական արդիական անսահմանափակ հնարավորություններով: Այս գերակայությունների մեջ Ֆ. Սարգսյանը ըստ ամենայնի առաջնակարգ նշանակություն է տալիս Ակադեմիայի միջազգային համագործակցության կարևորությանը: Այդպիսի

համագործակցության մասին վկայող հուսալի կապեր են համապատասխան պայմանագրերը Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի և ԱՊՀ մի շարք այլ երկրների, ինչպես և Մեծ Բրիտանիայի, Հնդկաստանի և Չինաստանի գիտությունների ակադեմիաների հետ: Երկկողմանի հարաբերություններով զարգանում են նաև ակադեմիական ինստիտուտների գիտատեխնիկական սերտ շփումներն ու կապերը ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և այլ երկրների հեղինակավոր գիտական հաստատությունների հետ:

Տասնամյակների բեղուն աշխատանքային-գիտական գործունեության հետ միասին, Ֆ. Սարգսյանը իր հայրենանվեր մասնակցությունն է բերել երկրի պետական հասարակական կյանքին: 1964-1990 թթ. նա ընտրվել է Հայաստանի Կոմունիստական կուսակցության կենտկոմի անդամ, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 10-րդ և 11-րդ գումարումների պատգամավոր, ԽՄԿԿ ԿԿ անդամության թեկնածու, 1995-1999 թթ.՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր: Ֆ. Սարգսյանը պարգևատրվել է Լենինի (1981), Հոկտեմբերյան հեղափոխության (1971), Աշխատանքային Կարմիր դրոշի (կրկնակի՝ 1965, 1976) շքանշաններով: 1998 թ. պարգևատրվել է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով: Նա ԽՍՀՄ Պետական մրցանակների և Ուկրաինայի Պետական մրցանակի դափնեկիր է:

Ֆ. Սարգսյանի ծանրակշիռ գիտական գործունեությունը ըստ արժանվույն է գնահատվում միջազգային գիտական հանրության կողմից. նա Ռուսաստանի Դաշնության և Վրաստանի գիտությունների ակադեմիաների արտասահմանյան անդամ է, Գիտական միությունների միջազգային ասոցիացիայի Գլխավոր ասամբլեայի անդամ, Պորտուգալիայի պատմության ակադեմիայի իսկական անդամ, Ռուսաստանի Դաշնության բնական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, ինչպես և տասնյակ միջազգային գիտական կազմակերպությունների պատվավոր անդամ: Համակարգչային գիտության մեջ իր մեծ ներդրումների համար նա պարգևատրվել է միջազգային գիտական «Ոսկե աստղ» և «Ոսկե մեդալ» շքանշաններով (Միջազգային կենտրոն, Քեմբրիջ, Մեծ Բրիտանիա), ինչպես և Էյնշտեյնի մեդալով՝ Գիտությունների, կրթության, արդյունաբերության և արվեստի միջազգային ակադեմիայի կողմից:

Իրեն հատուկ կորովով և լայնախոհությամբ Ֆ. Սարգսյանը այսօր շարունակում է ղեկավարել ՀՀ ԳԱ Ակադեմիան՝ մեծապես նպաստելով հայրենի գիտությունը զարգացնելու և միջազգային մայրուղիներ դուրս բերելու դժվարին և պատվավոր գործին, որի հաջողության գրավականը իր աշխատանքային վիթխարի փորձն է և անսպառ մտավոր ներուժը: Արևշատություն և երկար տարիների կյանք մաղթենք նրան:

«ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ